Բերգինց, Կերբեկ, Բոզոն, Լէյլեկ–(*արագիլ*), Կըրըգ (*կործանուած*), Ջէբալի, Դէյիրման–Դերէ, Փէրիձոր[1] Կարասայիդ, Ցունուս, Կըզըլ–Հասան *եւ* Վարդենիս *գեղերը, որոնք իրենց անցեալ փառքերից թէեւ մերկացած են, թշուառ ու աղքատ, բայց նկատելի է, որ ամէն մի գեղ ունեցել է անցեալում իր ամրոցն ու դղեակը*[2]։ *Այս*

---

[1] Փէրիձոր եւ Վարդենիս գեղերն ունին իրենց յատուկ առուները, որոց հին աւերակները ցոյց են տալիս, թէ դրանք պաշտամունքի տեղեր են եղել։ Փէրիձորը աւելի բարձր է, իսկ Վարդենիսը իր վարդաստաններով նուիրուած է եղել Անահիտին։ Վարդենիսի ձորընման է կազմվածի Վարդեհերի Վիշապազանց ձորին, ուր վարդի թփերը մշտընջենաւորապէս դալար են. վարդի կոկոններով զարդարուն։

[2] Ինչպէս որ Ջերմեսի Հովտի երկու կողմերը զարդարուած են աչքադարեան, նախապատմական եւ պատմական աւերակներով, Ջերմեսի ակունքից, Ցուրէն-Շէհէրից եւ Կարագաջլուից երեք-չորս կիլոմետր հեռաւորութեամբ, նոյն Կազան-Բաշի լեռներից բղխած Շառ կամ Մէյմուրադ եւ կամ Սարչամա առուակի շուրջը գտնուում են բազմաթիւ գեղեր, որոնք ինչպէս նկատելի է, դարձեալ շրջապատած են եղել Ցուրէն եւ Օրթա-Վերան շէների աւերակները։ Սրանք Եփրատի ակունքներն են, Շառ վտակի շուրջը, որը իջնում է դարձեալ Կարնոյ շամիր միանալու Դումլու լեռներից իջած Դումլու վտակին։ Այս գեղերից իրենց աւերակներով նկատելի են Ախոռջիկ, Բաշքենդ, Բաշօվաջըկ, Օլուխլի, Ճատակ, Թոփրագ-Կալա եւ Իւչքիլիսա։ Բաշօվաջըկը երկար ժամանակ Հովտիկի կենդրոնական աւանի դերն է կատարել, եւ իսկական անունը անթափանցելի է մնացել։ Օլուխլին (Օլուխլի — ծորակաւոր, ջրերը ծորակներով հաւաքող-ամփոփող) ջրերի բաժանման ջրաբաշխական կենդրոնը լինելու աւերակներ ունի։ Թոփրագ-Կալան պարսկական հողաշէն որմերով է շինուած, իսկ Իւչքիլիսան մի հին վանք է, որը այնպէս աւերուած է որ պէտք է պեղել հիմքերը, որ գտնուի ձեւերը եւ յատակագծերը։